# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Անուշավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի և ԹԳՀԳ-ի ուսուցչի /8 դասաժամ/, ֆիզիկայի ուսուցչի /17 դասաժամ/,պատմության ուսուցչի/ 3 դասաժամ/, երգ երաժշտության ուսուցչի /3դասաժամ/ և կերպարվեստի ուսուցչի /3 դասաժամ/ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում /Ձեվ 1/
- մեկ լուսանկար 3x4չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/ ,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն /Ձեվ 5/,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2024թ. հոկտեմբերի 11- ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 14:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ հոկտեմբերի 15-ին՝ ժամը 12:00-ին , ՀՀ Շիրակի մարզի <<Անուշավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Անուշավան, 7-րդ փողոց, շենք 23 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 33 42 70 հեռախոսահամարով: